

Հարգելի Անուշ Էվոյ ան
Ստորև ներկայացնում ենք Ձեր 15.03.2016թ. հարցման պատասխանը .

1-2. Հարցեր

«Թեղուտ» ՓԲԸ պոչամբարի հենապատերի ամրությունն արդյոք ապահովված է:

Տեղի՞ է ունեցել վերջին մի քանի օրերին հենապատի փլուզում, որի հետևանքով բնապահպանական արտակարգ իրավիճակ է ստեղծվել շրջակամիջավայրի համար:

Պատասխան

Ընկերությունն պոչամբարի կամ որևէ այլ հենապատի փլուզում ստեղծիչի ունեցել:

Պոչանքային տնտեսության հիմնական միավորները՝ պոչամբարը, ջրիավաք ավազանը և պարզեցման ավազանը գործել և գործում են նախագծով նախատեսված կարգով. պոչամբարի պատվարը, ջրիավաք և պարզեցման ավազանների ամբարտակները կատարում են իրենց բոլոր գործառույթները:

3. Հարց

Խնդրում եմ տրամադրել 2016թ. «Թեղուտ» ՓԲԸ կողմից իրականացվող բնապահպանական ծրագրերի և միջոցառումների փաթեթը:

Պատասխան

Ընկերությունը շարունակում է Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանով 2016թ. նախատեսված միջոցառումների իրականացումը: Դրանք մասնավորապես ներառում են հետևյալը՝

- Փոշու մոնիտորինգ
- Ջրային ռեսուրսների մոնիտորինգ
- Աղմուկի և թրթռման (վիբրացիա) մոնիտորինգ
- Կենսաբազմազանության մոնիտորինգ
- Բնապահպանական կառավարման համակարգի ու դրա համար անհրաժեշտ նթացակարգերի կազմման և ներդրման աշխատանքներ
- Թափոնների կառավարում
- «Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի» շրջանակում անտառպատման, այգետունկի և այլ աշխատանքներ:

Բնապահպանական միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն հասանելի է Ընկերության պաշտոնական կայքի (www.vm.am) «Կայուն զարգացում» բաժնում:

Հարգանքով՝
Վահրամ Ավագյան
Մամուլի խոսնակ
«Վալլեքս» խմբի ընկերություններ